

ՀԱՍՑԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբագրութեան կը պատկանի:

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ազգի մը ապագայ կեանքի բարեփոխման առաջին պայմանն է Միութիւնը:

«Միութիւն» ըստ մեն տեղ ձրի կը զրկուի:

Ա - ՅԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ

1897

ԱԹԵՆՔ

ԹԻԻ 7

1897

Շնորհաւոր նոր տարի, հայ ժողովուրդ:

Իրաւ, ամեն տարի՝ նոր փորձանք մը եղաւ քեզի համար և անշուշտ երկիւղախառն կասկածանքով նայեցար 97 թուականին և ըսիր մտքէդ. «վա՛յ մեզի, եթէ դուն ալ նախորդներուդ պիտի նմանիս»:

Մաղթենք սակայն որ այնպէս չըլլայ, մաղթենք մանաւանդ որ այս տարին մեր ցաւատանջ ուղեւորութեան կատարածը ըլլայ, որովհետեւ մենք ալ, Իսրայէլի ժողովրդին պէս, անապատին մէջ կը թափառինք Աւետեաց Երկիրը հասնելու յուսով: Բայց, աւա՛ղ, մեր առաջնորդները Մովսէս կամ Ահարոն չեն, ամպէ սիւնը մեր առջեւն է չերթար ու Աստուած չերեւնար Սինայի գագաթը: Մովսէս փշրեց Ոսկիէ հորթը զոր ժողովուրդը կ'ուզէր պաշտել, մեր մէջ ընդհակառակը, մեր առաջնորդներն են որ պաշտօն կը մատուցանեն Ոսկիէ հորթին: Պատրիարքնիս պատուանշանի մը համար Մեղրը-Սուլթանին հետ կը պրոնկանայ, մեր երեւելիները փարաւոնին առջև կը քծնին պաշտօն ստանալու համար և մեր յեղափոխականները ժողովրդէն ստակ կը կորզեն ամուսնանալու և կնիկ ունենալու և խեղճ ժողովուրդը կը ըստ պատէ Աւետեաց Երկիրը հասնելու...

Ու կը թափառիս անապատին մէջ, անօթի, ծարաւ, հոգեվար, հրաշագործ գաւազանին տեղ, որ ժայռէն ջուր կը բխեցնէր, թուրքին դաւազանն է որ կ'իջնէ գլխիդ ու կը ջախջախէ զայն: Մանաւանդ ու լորամարդի չիջնար իրկիւրքէն՝ այլ սոփն է որ իր կմախքէ թեւերը բացած՝ դէպի քեզ կուգայ...

Մէհէմմէտի հուրինները մուրհիցուցին Քրիստոսի Սուրբերը, Առաքելայինը տեղի տուին խալիֆաներու առջև, Աստուած թրիառուեցաւ արդեօք...

Ո՛հ, ո՛հ: Նոր տարիին սեմէն այս յուսահատ մտածումներով չմտնենք: Աւետեաց Երկիրը պիտի հասնինք, բայց դեռ ճամբայ ունինք քաղիլք, մեր ջանքը պէտք է ըլլայ ուղիղ ճամբան գտնել և անոր մէջէն ընթանալ յամառօրէն սինչաւ որ հասնինք նպատակէտին:

Այս ուղիղ ճամբան, ըստ մեզ, ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ ճամբան է:

Անկեղծ, անշահախնդիր, հայրենասէր Միութեան ճամբան: Միութիւն՝ ո՛չ թէ ժողովուրդը միասին խաբելու, միասին ջարդել տալու համար, այլ Միութիւն՝ ժողովուրդը գերութենէ ազատելու համար: Եթէ նոր տարին Միութեան գաղափարը իրադրօ՛ք. կրնանք 1897 թուականը մեր ազատութեան առաջին տարին համարել:

Մենք հոս կ'ուզենք պարզել այժմ թէ՛ ի՞նչ ջանքեր կ'ըլլան Միութիւնը առաջ բերելու համար և թէ՛ ժողովուրդը ի՞նչ դեր կ'արդէ կատարել այդ դադափարի յաղթանակին համար:

Մեզ կը հաղորդուի թէ՛ հնչակեան կարեւոր անդամ մը քաղքի մը մէջ դումարում մը ընելով, հոն ներկայիս ըլլալով քեզի է նախ սոյն կուսակցութեան ներքին խնդիրները և նազարեկի արտաքին պարագաները, յետոյ խօսելով Միութեան խնդրին վրայ, տեղեկացուցել է թէ՛ հնչակեան կուսակցութիւնը առաջարկներ

ըրեր է արդէն Դաշնակցականաց, միութիւն մը առաջ բերելու համար և թէ՛ այս վերջինները պատասխանած են թէ իրենց մասնաճիւղներուն կարծիքը առնելէ յետոյ միայն կարող պիտի ըլլան վերջնական պատասխան մը տալ: Միւս կողմէ մեր այս թիւին մէջ կը հրատարակենք Բարիզէն ուղղուած նամակ մը որուն մէջ կը պատմուի հնչակեան և Դաշնակցական կուսակցութիւններու բանակցութիւնը, Միութեան մասին: Ուրեմն առաջին մեծագոյն քայլը առնուած է ահաւասիկ կը մնայ խնդիր մը. ի՞նչ պիտի պատահի մասնաճիւղները: Մենք վստահ իրենց ազգասիրական զգացումներուն վրայ, կը յուսանք թէ «միանանք» պիտի ըլլայ իրենց պատասխանը, բայց հակառակ պարագային, ջո՛ւրը պիտի իյնայ Միութեան խնդիրը և ժողովուրդը անտարբերութեամբ պիտի ըսէ. «է՛հ, միութեան համար ջանքեր եղան, բայց չյաջողուեցաւ, ի՞նչ ընենք»:

Հոս, ահա՛, սա հարցումը կը ներկայանայ մեզի:

—Ժողովուրդը իրաւունք չունի՞ միջամտելու և իր կամքը յայտնելու և զայն ընդունել տալու այդ կուսակցութիւններուն:

Մեր ընթերցողներէն ոչ ոք կը կասկածի կարծենք ժողովրդի այս իրաւունքի մասին:

Յեղափոխական կուսակցութիւնները գոյութիւն ունին ժողովրդին դրամով, ժողովրդին աջակցութեամբ, անոր բարոյական, նիւթական և անհատական քաջալերութիւններուն: Գոհարութիւններուն, անձնութիւններուն շնորհիւ: Փոխադար-

ձաբար կուսակցութիւններն ալ կ'աշխատին միմիայն ժողովրդին համար: Այսպէս ամենասերտ կապերով յեղափոխական կուսակցութիւնները և ժողովուրդը կապուած են իրարու հետ: Եւ ինչպէ՞ս կարելի է որ կոնսական կարեւորութիւն ունեցող խնդրի մը մէջ, ինչպէս է Միութեան խնդիրը, ժողովուրդը ձայն չուսենայ:

* * *

Մենք մեր կողմէ, հրաւիր կը կարգանք ժողովրդին որ Միութեան խնդրի մասին իր կամքը յայտնէ և կ'ըսենք իրեն. — Ահա՛ յեղափոխական երկու գլխաւոր կուսակցութիւններու Միութեան մասին բանակցութիւններ սկսած և յառաջացած են և ամեն հայրենասէր հայու փափաքն է որ բանակցութիւնները յաջողութեամբ պսակուին: Այն օրը ուր Միութիւնը հռչակուի, դուն, հայ ժողովուրդ, պէտք է նոր եռանդով զրկես յեղափոխութիւնը, քու նիւթական, բարոյական ու անհատական ուժերդ տառաջորդ և գերադոյն կը յաւիտէ մղես ԱԶԱՏՈՒԹՅԱՆ համար, իսկ եղբ տեանես որ իշխանական պատճառներով, զձուձ, ետամուլ, անձնատէր կամ քինական շփոթութիւններով, այս կամ այն կողմէն արգելքներ կը յարուցուին Միութեան համար, այն ատեն ըսէ այդ կեղծ հայրենասէրներուն. «Թքել եմ ձեր ալ ձեր յեղափոխութեան ալ շրջան», և զայսիք քու ամեն օգնութիւններդ, որովհետեւ ահա՛ փորձը ցոյց առաւ թէ բաժանեալ ուժերով յեղափոխութիւն փորձել, որչա՞փ աղիտաբեր կ'ըլլայ մեզի: Առանց Միութեան յեղափոխութիւնը ազգին արմատական փճացումը առաջ պիտի բերէ, և ասոր համար լաւ է որ այդ տեսակ յեղափոխութեան մը հակառակ դառնանք, քան թէ քաջալերենք:

Հերիք վատնուած դրամները, հերիք գործուած յիմարութիւնները, հերիք թափուած արիւնները:

* * *

Այն օրը ուր անմիաբանութեան պատճառու ժողովուրդը դառնայ յեղափոխականներու դէմ և բացարձակապէս ջլատի գիրենք, միթէ Սուրբ Դատը կորսուած պիտի ըլլայ:

Երբեք:

Այն ատեն վերջին: գերոգոյն փորձը կը մնայ դեռ Ազատութեան

յաղթանակը տանելու համար: Գերագոյն և գուցէ լաւագոյն փորձը, ուրիշ պէտք էր սկսիլ:

Երկրորդ յօդուածով մը պիտի բացատրենք թէ ո՞րն է այդ փորձը:

ՆԱՄԱԿ ԲԱՐԻՁԵՆ

Մեր Բարեկի թղթակիցը պ. Կ. Գալատացի՝ հետեւեալը կը գրէ մեզի.

«Միութեան գաղափարն իրականութեան մօտեցաւ, ինչ որ բաւական ուրախութիւն է: Հնչական կուսակցութիւնը՝ որ միշտ հեռու կը փակչէր Միութենէ, հիմա ինքն իսկ կ'առաջարկէ Դրօշակեանց միանալու համար, Բայց կ'երեայ թէ Դրօշակեանց պայմաններ կ'առաջարկեն և կը պահանջեն մէկ երկուքին հեռացումը հնչական նորակազմ վարչութիւնէն: Այս բանը յանձն առնելու են հնչականք, առանց ո՞ր և է զիտողութեան, գոնէ գործին սիրոյն համար: Զոհողութիւնն ասանկ պարագաներու մէջ պէտք է ընել: Այսպիսով ո՞չ միայն Դրօշակեանց բարեկամութիւնն ու սրտերը կը գրաւեն, այլ վերջ կը տրուի նաեւ ուրիշ առարկութեանց: Իսկ եթէ՛ Դրօշակեանք այս անգամ ալ յամառին Միութեան, այն ատեն թող վերջնեն իրենց թերթին ձախտէն «Դաշնակցական» անունը: Ազգն հիմա ամեն ժամանակէն աւելի պէտք ունի Միութեան: Թշնամին քանդեց ցրուեց ամեն բան, գոնէ մենք մեր մէջը միանանք և գործենք համերաշխութեամբ:»

«Այս երկու կուսակցութեանց միանալէն յետոյ՝ պիտի առաջարկեմ միանալ նաեւ Արմէնականներու հետ: Պիտի ըսեն թէ գաղափարներու և ուղղութեանց հակառակութիւններ կան անոնց միջեւ. հոգ չէ՛. թող իրար համոզեն և երկու հակառակ ուղղութեանց միջին ճամբան լռնելով գործեն, փոխանակ ամեն մարդ իր ուղած կերպով գործելու և ազգին առջեւ պատասխանատու մնալու:»

«Պատասխանատու բառը անոր համար կը գործածեմ՝ որ ամեն մարդ եղած ջարդերուն պատճառ կը բռնէ յեղափոխականներու անխուհեմ ընթացքը: Բայց պէտք է զիտնող՝ թէ թիւրքը պատրաստած էր ամեն բան, և կ'ուզէր վերջ տալ հա-

յութեան. միայն յարմար առթի կը սպասէր, և այս յարմար առթին է որ ընծայեցինք մենք, յեղափոխականներս, և ո՞չ թէ պատճառ կ'զանք կոտորածներու:»

«Սր կուգայ որ այս ալ կը մոռցուի, ինչպէ՛ս մոռցուած է Յաղկիւտի, Շահաբասի, Լինկթիմուրի և Ճինկիզիանի կոտորածները, և հայոց ազգը նորէն կը մնայ կանգուն, կը թօթափէ օր մը իւր գերութիւնը և կը կորզէ զայն հաստատող չղթան:»

ՄԵՐ ՀԱՐՑՈՒՄԸ

Ինչպէ՛ս արդէն բանի անգամներ դրեցինք, նամակներ կը շարունակեն ուղարկ մեր խմբադրութեանը՝ որոնցմով մեր ազնիւ թղթակիցները իրենց համակրանքը կը յայտնեն Միութեան գաղափարին համար և քաջալեր կը կարգան մեզի: Այդ բոլոր համակրանքն արտայայտութիւններու մի առ մի պատասխանել անկարելի ըլլալով մեզ, հոս անգամ մըն ալ հրապարակաւ մեր շնորհակալքը կը յայտնենք մեր անձանթ բարեկամներուն և ընկերներուն վստահացնելով զիրենք որ «Միութիւն» իրեն զօրավիզ ունենալով բոլոր այդ ընկերակիցները իր գործը առաջ պիտի տան յամառ ու յարատե քայլերով:

Այս անգամ մեր ընթերցողներուն կ'առաջարկենք տեսակ մը ժողովրդային վճիռ կամ քուէարկութիւն, աւելի որոշ գաղափար մը ունենալու համար մեր բարոյական զօրութեան վրայ: Ահա՛ մեր առաջարկը.

Մեր ընթերցողները թող թուղթի մը վրայ գրեն սա հետեւեալ հարցումներու պատասխանները և մեր հասցէին զրկեն:

Ա. Միութեան համակիր էք:

Բ. կը փափաքէք որ Միութիւն ըլլայ համերաշխ գործունէութեան համար, թէ կը նախնորք բացարձակ ճուլում և նոր ու ընդհանուր յեղափոխական մարմնոյ մը կազմութիւնը:

Գ. ի՞նչ միջոցներ կը մտածէք ասոր համար:

Պատասխանները պէտք է ըլլան կարելի եզո՞ծին չափ կարճ և ամփոփ: Դրողը պէտք է զնէ իր անունը

կամ կեղծանունը և գտնուած քաղաքին անունը: Մինչև երկուքուկէս ամիս պատասխաններ կրնան գրուիլ: Այդ թուականէն յետոյ պիտի կատարուի քուէհամարը և արգիւնքը «Միութիւն»ի միջոցաւ պիտի հաղորդուի մեր ընթերցողներուն: Այս միջոցաւ պիտի կրնանք իմանալ թէ որչափ կը հասնի Միութեան դաշտափարակիցներու թիւը և թէ բնականապէս ժողովուրդը ինչ միջոցներ կը խորհի Միութիւնը առաջ բերելու համար:

Այս կարծիքներու հաւաքումը մեր ապագայ գործունէութեան համար նախադուռ մը պիտի ըլլայ:

Մ Ի Ա Ն Ա Ն Ք ՓՐԿՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ազգին փառքին նախանձանդիր ու Ազատութեան ցանկացող ճշմարիտ հայրենասէրներու սիրտը դաւնութեամբ ի կը մորմոքի արդի թշուառ կացութեան վրայ: Եւ ահա՛, ի լրումն չարեաց, Նազարբէկեանի քստմնելի արարքներն ու զեղծումները կուգան մեր արինահոս վերքերուն վրայ աղի ու պղպեղի դերը կատարելու և դանոնք մինչև ոսկորը բանալու:

Ահարկու և սոսկալի զայրութիւն հոս ալ պայթեցաւ, վէճ յիշատակական կռիւ, բաժանում իրարու յաջորդեցին, զայթակղութիւնը ա՛յն աստիճան սաստկացաւ, որ քիչ ֆնաց ծանր հետեւանքներ առաջ դար, եթէ լուրջ անձեր չհանդարտեցնէին յուզուած արտերը:

Նուիրական պարտականութիւն մը և սիրելի Ազգիս շահերը պաշտպանելու գիտակցութեամբ, կը փութամ ի դիմաց յեղափոխականներու ձայն բարձրացնել: Ամեն անոնք որ մօտէն տեղեակ են իրաց այս վիճակին, չեն կարող զսպել իրենց արդար զայրութիւնը առ Նազարբէկ, նոյն իսկ անոնք որ ատեն մը զէմ էին յեղափոխութեան, երբ դեռ չէին ճաշակած համբիթին երկաթէ մականին աղդեցութիւնը:

Մօտէն տեղեակ ու ծանօթ լինելով հնչակեան կուսակցութեան կազմակերպութեան, ծրագրին ու Նազարբէկեանի միապետական վարչու-

թեան, որ ինը տարիի մօտ վարեց կուսակցութեան գործերը քմահաճութեամբ իրր միապետ: կը հարցուի թէ՛ ինչ օգտակար ծառայութիւն ըրաւ Ազգին և կուսակցութեան:—Նա ազդեցաւ ու գործեց միայն իր և սին ու փառքին համար: Այդ վիժած սօսիալիսթը մօտէն ճանչցողը լաւ կը ըսէ որ քննած է անոր ձիւղերն ու կարողութիւնները: Իրապէս՝ ճիշդութիւն, լեզուով խիստ բարի, ձեւերով պարկեշտ, միով բանիւ—«գառնազգեստ գայլ», Տաճկահայաստանի հանգամանքներուն կատարեալապէս անզիտակ: Իրեն համակրողներու ստուար թիւ մը ունեցաւ, սրտեք գրաւելով՝ իրը կուռք պաշտուեցաւ, իր փառասիրական ձգտումները զինք բուն նըպատակէն շատ հեռու մղեցին և Ազգին գործերը այս վիճակին հասնելուն պատճառը եղաւ և գերազանցեց մեր արտաքին թշնամին: Մարդաբէլ—համբիթն իր կանանոցային դիւանագիտութիւնով անկարող էր այսպիսի հարուած մը տալ յեղափոխական Սուրբ Գործին, «Տունն այն ժամանակ կը քանդուի երբ գողը ներսէն է», կ'ըսէ աղջային առաջը:

Ձգաղէք, զգաղէք հայ եղբարք ձեր չարաչար խաբուած լինիլը, այս մեծ-եսամօլէն, ձեր նպատակը որ չէիք խնայեր Փրկութեան Գործին, երբեք իր նպատակին չգործածուեցաւ, Նազարբէկեան տոկոսի տուաւ Եւրոպայի պանքաներու ի նպաստ իրեններուն: Այժմ՝ բաւ չհամարելով ըրած աւերումներն, սկսած է հակառակ կուսակցութեան գործել, անօթի խնկարկուներ ու փողոցի թափթըփութներ գլուխը փոխելով խմրակ մը կաղնիք ու աստ անդ կ'ուզարկէ ինքզինքը արդարացնելու և իր կեղծանուն թերթով կը ջանայ անպատուել ուրիշները:—Միթէ «հնչակ» ըսելով Ա. Նազարբէկ և իր կիներ պէտք է ճանչնալ,—ո՛չ, ո՛չ, այդ բաղդախնդիրներ զուա խաբեբաներ են, սրսը ձեռքէն յալիւտակուած վագրին պէս մոլեղնած ու կատաղած, Նազարբէկ, կը ճղնի նորանոր խայտառակութիւններ ստեղծել, հրապարակի վրայ իրենց իսկական անուններով զրպարտել ու բամբասել գործիչները, ահա մատնութեան նորահնար ձեւ մ'ալ: Նուիրակա՞մ կեղրոնին արտաքսուած այս Նոր-Մերուժանը, իր աղբաթաւ սուտի տարափներով նորանոր յուզումներ առաջ կը բերէ, խե՛ճը

այդ պառակաւ անէծքներուն մեջ միտթարութիւն կը փն ուի. սակայն ամենքն ալ համոզուած են ակներեւ ճշմարտութեան, թող չատանայ միայն զլուխը ժողուած ռուս սօսիալիսթներու հետ քէ ֆընել ազգէն կորցած դրամներով: Մինչդեռ անդին, գաւառական վայրերու մէջ գործիչները անզին ու անօթի ձեռնունայն մնալով՝ երբ նամակներով օգնութիւն կը թախանձէին, պարոնը պատասխան իսկ զրել չէր հաճեր, թող չարաչար մեռնէին որ յիշատակին ու անունին անմահացնէր: Ձենէ չատերը, որ «հնչակ»ի ընթերցողներ էք, կրնաք զգուանել ու արդար զայրոթով գոչել:—Ձէյթունի հերոսական պատերազմին մէջ գտնուող գործիչները երբ քու և կիսըդ անունով զօրագուներ մկրտած թշնամիին ջարդ կուտար, դու ո՞րպիսի գովաբանութիւններ կը շուայէիր, երբ անտի կը մեկնէին կեզրոն գալու ո՞րպիսի ցրնծութիւններով կ'ողջունէիր անոնց առաքելութիւնը:—Երբ Պալիս Ա. Ա. ի վրայ անձնական հակառակութեան ու սխալ համոզումի մղեալ սպանութեան միտք եղաւ, դու չէ՞իր որ արհամարանք՝ ու զայրութիւն կը գոչէիր: «Եղբայրասպանութիւն» «կայն» նական արարք:—Երբ Ա. Բ. Փոքր-հայքը յեղափոխութեան ոգով վառելէ յետոյ կը ձեռքակալուէր իր ընկերներով, դու չէ՞իր անոնց կենսագրութիւնը հրատարակողը և յիշատակին անմահացնելու ձայն արծակողը, և այն և այն և այն, դեռ ո՞րը թուենք: Այս անձնաւորութիւնները ինչ կանուխ դաւաճան, լրտես և այլն եղան:—Եթէ լրտէս էին ինչո՞ւ զանոնք կուսակցութեանդ գործիչ ընկերները կ'ընգունէիր:

Այո՛ նոյն այս գործիչ ընկերներդ էին որ կեղծ դիմակը վար առին, երբ տեսան որ Գործը նպատակէն վիժելով՝ Ազգին օգուտը իսպառ կը ջընջուէր շնորհիւ... և հայրենիքը կ'ամպանար արեան հեղեղներու մէջ: Դու խայտառակուեցար և հիմայ ելեր անխղճաբար իրը անձնապաշտպանութիւն քեղի զէնք ըրած ես զրպարտութիւնը և սուտը: Ինչո՞ւ խանը, (Ն. Կ.) Սիպերիա արողորհելուն յանձանքը գործեցիր, զոհել տուիր այդ թանկազին կեանքը յօգուտ ռուս սօսիալիսթների և անոնց չըջաբերականները տարածել կ'ուզէիր Թուսիա: Օտարին շահին համար կ'արժէր զո-

հեղ Ս. Գրիգորի ծառայող գործիչները: Ս. Պուլկարիոյ մէջ, Կ. (Խ. քաղաքէն), կիպրոսի մէջ սպաննել տուիւր, Շ. գործակալներու դէմ դրուած մատնել տուիւր, քեզ սկզբունք ըրեր ես խաւարեցնել այն գործիչները, որոնք կը յանդիմանն քննել միապետական վարչութիւնը: Նկատելով այս ամենը շատ գործիչներ հեռացան ասպարէզէն: Քեզմով զբաղող չկայ այլեւս, դու գլորուեցար մոռացութեան անդունդը, ապագային....

Յանուն Աղային Սրբազան Գաւթին, կը խնդրենք որ ամեն յեղափոխական գործիչներ ու կուսակցութիւններ Միութեամբ յառաջ վարեն Փրկութեան Գործը, ուշանալը սրբապօղոթիւն է և ապագան իրենց վերայ պիտի ծանրացնէ սոսկալի պատասխանատուութիւնը. եթէ չարունակեն իրենց անտարբերութիւնը դէպ ի Միութիւն, Հայ Ժողովրդի կամքն է ՄԻՌԻԹԻԻՆԸ:

Կ. Պոլիս

ՎՐԷԺ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

«Իր ինքնուրոյն անկախութեան ու իր եղբարցը ազատագրութեան գաւթին համար, մինչև իսկ մեռնելու տրամադիր գինուորն է՝ յեղափոխականը, միայն ազնիւներն են որ կըրնան ըլլալ ճշմարիտ յեղափոխական»:

Հայրենիքը թշնամուոյն աւերումէն ու կործանումէն ազատելու գիւտակին տակ ծածկուած փառամուլ անձերու գծում եսասիրութեան գոհացում չի տանք, պէտք է նուիրական ըլլայ մեզ համար յիշատակը այն անվեհեր, քաջ ու ազնիւ զինուորին որ առկի ազատ ըմբռնումով, առկի լայն շրջանակի մէջ կը կռուի իր եղբարներուն դատին: Պէտք է շանթն ըլլալ այրելու համար եսասէրն ու բռնաւորն և ատելութեան ահագնաստ ուրտը իր բարկութեան կրակովը թող այրէ բռնաւորները, պէտք է բռնութեան դէմ բռնութեամբ կռուիլ որով արժանի ըլլանք այս ազնիւ ու անհունապէս բարձր գործին, դու ո՛ր Հայ յեղափոխական պէտք է մնաս ամենէն բարձր կուսակցական ոգիէ: Ի՞նչ, միթէ դու սահմանուած ես կռուիլ ու մեռնիլ այս կամ այն կուսակցութեան հաշտոյն, երբ դառ-

նաս կուսակցական մարդ, այդ կը նշանակէ թէ դու եսասէր ես, ինչոր ներքին չէ յեղափոխականին:

Ատել ու վրէժխնդիր ըլլալ անոնց որ կ'ուզեն արդար բողբոխ ձայնը խղզիլ և հանրութիւնը միայն իրենց եսին ու փառքին զոհել, ճշմարիտ յեղափոխականը պէտք է ունենայ կուսակցական կաշկանդում, չահարնդրութիւն, եսասիրութիւն, այլ գործին պահանջման համեմատ եղբայրասէր հեղաշարժայր, ազատ ու անհրկուն պէտք է ըլլայ: ՄԻՌԻԹԻՆԸ, ահա՛ այս պէտք է ըլլայ փափաքը ամեն հայրենասէրներու, ըլլայ հնչակեան, Գաշակեան կամ Արմէնական և կամ սոսկ ազատական:

Միանա՛նք, եղբայրք, պաշտպանելու մեր դատը և ազատելու մեր Սուրբ Հայրենիքը իր ճգնամամէն: Այսօր ազգին դաւակնեցող ստոր վիճակի մը ենթակայ, գաղթած, լքուած ու նոթի են, Հայրենիքը արեան ճահիճ մը դարձեր է: Եթէ Միութեան հրէշտակը իր թեւերը տարածած ըլլար հայերու վրայ, հիմա մեր դատը որոշ դիրքի մը հասած էր, թերեւս վերջացած ալ: Ուրեմն կուսակցութիւնները թող քաշուած դիրք չի բռնեն, այլ տխուր անցեալը դարձնելու համար թո՛ղ թեւերին բանան, համբուրուին ու Միութեամբ գործեն:

Թող ամենան չահամուլ եսասէրներ: Ընկեր Միութեան Գաղափարի Վառնա ՈՐՈՏՈՒՄ

ԻՆՁՈՒ ՁԵՆՔ ՄԻԱՆԱՐ

«Միութիւն»ի թիւ 6 խմբագրականին մէջ կարդացինք Բարդի Գօմիթիին հրաւերը յեղափոխական պետերու և գործիչ մարմիններու ուղղուած Միութեան խնդրին վերայ նախնական բանակցութիւններու լուրը: Մեծ զարմանք և վիշտ կը զգանք այնքան թերթերու տնօրէններուն, որք չեն հաճեր Միութեան հրաւերին պատասխանել: Նո՛րա՛ որ այս սոսկալի ճգնաժամին մէջ կը փորձեն խաղալ ազգի ժը ճակատագրին հետ անխոհմարտ, արդեօք պիտի կրնան լուծել Գորդեան հանգոյցը—Հայկական խնդիրը, ատրկա իրենց կարողութենէն շատ բարձր է, այդպիսիները ուրիշ բան չեն, այլ մին իր չահամութեան և միւսը փառ-

քի դաբնին խելու բարբաջանքէն մաշուողներ: Մենք կը գոչենք այդպիսիներու երեսին.—Միութեան ձայնին անաստողը Ազգին ոխերիմ թըշնամին է, որովհետեւ փորձը մեզ սորվեցուց բաժանեալ ուժերու ողբալի արդիւնքը, հետեւապէս Հայ եղբայրներ, Միութեամբ միայն կրնանք մեր Ազատութիւնը ձեռք բերել:

ԿԵՑՑԷ ՄԻՌԻԹԻՆԸ:

Իսիպէն

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

«Տէյլի Քրօնիկ»ի Պոլոյ թղթակից հաւատարի աղբիւրէ տեղեկանալով կը գրէ թէ՛ Ռուսիոյ դեսպան պ. Նէլիտօֆ դժուարութիւններ առաջ կը բերէ, երբ միւս տէրութեանց դեսպանները բարենորոգմանց ծրագրին գործադրութեան մասին համեմալ տրամադրութիւն ցոյց կուտան:

Թղթակիցը կ'աւելցնէ թէ՛ Բ. Դըրան և Ռուս դեսպանատան միջեւ զաղտն բանակցութիւններ կը լինին, Ռուսիա թուրքին ըրած պաշտպանութիւններուն փոխարէն կը պահանջէ եղի Սև ծովուն նաւահանգիստներէն մէկը՝ Սինոպը կամ Տրապիզոնը, բաց աստի Ռուսիոյ տրամադրութեան տակ երկաթուղիի գծի մը շինութեան արտօնութիւնը: Այդ գծի երկաթուղիներ պիտի հասնի մինչև Պաշկապ ծոցը: Որուն շինութիւնը ճամբաներու կանոնաւորութենէն շատ դիւրին է եղեր:

—Չարաժայտի կը գրեն թէ՛ դեկտեմբերի մէջ թուրք զինուորներու և Սինասեան խուճի միջեւ մեծ ընդհարում մը տեղի ունենալով՝ թուրք զինուորներէն 16 հոգի սպանուուեր են. իսկ հայերէն մէկ վիրաւորուած և Տրպրան անտունով մէկն ալ ողջ ձերբակալուած է:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացած է Թուրքիոյ Ս. քաղաքէն պ. Խորէնէ 10 դահեկան: Նոյն քաղաքէն պ. Շաւարշէ 10 դհկ. Աթէնք բնակող պ. Ղ. Շ. է 20 տըրալով: (Կէս օսմ. ոսկի):

—«Միութիւն»ի ճգն թիւին մէջ հրատարակուած Ամերիկայի Փրովիտէնս քաղաքէն պ. Ա. Զ. ի զրկած 3 տուարը, պ. Ս. Շ. միջոցաւ Հայ կաթոսեաներու բաժնուեցաւ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՌԻԹԻՆԸ»

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Ա. ԳՕԲԲԻՆՈՍ